

ԹԻԼ 25982  
Օգոստոս 15, 1978

Մեծայարգ  
Տիար Սուրեն Էրվան  
Թորոնթո.

Յարգելի Տիար Էրվան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխ մը հաստատելու աշխատանքներու կապակցութեամբ՝ հրահանգած ենք որ Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-գանձապահ Հոգ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի նախագահութեամբ խորհրդակցական ժողով մը զուամբուի Երեքշաբթի Օգոստոս 29, 1978, երեկոյեան ժամը 8.00ին՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ: Սոյն ժողովին հրաւիրած ենք Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը եւ համայնքիս օգտաշատ ազգայիններէն մի քանի անձեր:

Այսու զիրով կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին, որուն զլիաւոր օրակարգը պիտի ըլլայ ծրագրումը օրինականաբան քայլերուն որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ, կազմակերպելու համար երկրորդ ծուխ մը Թորոնթոյի մեր համայնքին մէջ:

Կը յուսանք որ նկատի ունենալով վերոյիշեալ թուականը ներկայ կը գտնուիք ժողովին, ձեր օգտակար թելադրութիւնները բերելու խորհրդակցութեանց:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ